APPROVED
Club Licensing Quality
Standard V 2.0
www.uefa.com

ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2019/2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

ք. Երևան 20 դեկտեմբերի 2018թ.

Հարգելի տիկնայք և պարոնայք,

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան նոր էջ է բացում ակումբների հետ փոխհարաբերություններում՝ նպատակ ունենալով քայլ առաջ անել Հայաստանում պրոֆեսիոնալ և մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ոլորտում: Մենք պատրաստակամ ենք առավելագույնս ներառական լինել՝ ակումբների հետ հարցերի լայն շրջանակի քննարկման և իրագործման համար: Այդ առումով չափազանց կարևորում ենք արտոնագրման համակարգի դերը:

Հիմք ընդունելով ՈՒԵՖԱ-ի Ակումբների արտոնագրման հիմնական գործընթացը՝ սույն հայտարարությամբ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պաշտոնապես սկսում է իր՝ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի հերթական մրցաշրջանը, որին կմասնակցեն 2019/2020 թվականների մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակից թեկնածու թիմերի մայր ակումբներն ու այն ակումբները, որոնք կորակավորվեն մասնակցելու ՈՒԵՖԱ-ի 2019/2020 մրցաշրջանի պաշտոնական ակումբային մրցաշարերին: Միաժամանակ հնարավորություն է տրվում ՀՀ Առաջին խմբի առաջնության մասնակից ակումբներին ևս դիմել և մասնակցել արտոնագրման գործընթացին՝ համապատասխան փորձ ձեռք բերելու համար: Հետագայում Բարձրագույն խմբում հայտնվելու դեպքում այս ակումբները արդեն փորձի պակաս չեն ունենա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 0010, ԵՐԵՎԱՆ, ԽԱՆՋՅԱՆ 27
0010 KHANJYAN str. 27, YEREVAN, REPUBLIC OF ARMENIA
ՀԵՌԱԽՈՍ/PHONE: +374 11 88 88 08, ՖԱՔՍ/FAX: +374 10 54 71 73
e-mail: ffa@ffa.am, URL: www.ffa.am

2019/2020 թվականների մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության մեկնարկը նախատեսված է 2019 թվականի օգոստոս ամսին, ուստի ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացն ընթանալու է նախորդ մրցաշրջանում կիրառված ժամանակացույցով՝ իր մեջ ներառելով որոշակի փոփոխություններ: Վստահությամբ կարող եմ նշել նաև, որ ակումբների վերահսկողության գործընթացը որպես ակումբների արտոնագրման և ֆինանսական արդար խաղի բաղկացուցիչ մաս արդեն կայացած և ամրացած մի գործընթաց է դարձել: Գալիք մրցաշրջանում ևս այն իր ուրույն տեղն է ունենալու ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգում:

Ընթացիկ մրցաշրջանում կկիրառվի 2018 թվականի հոկտեմբերի 29-ին ՀՖՖ Գործադիր կոմիտեի կողմից հաստատված ՀՖՖ ակումբների արտոնագրման կանոնակարգը (2018 թվականի խմբագրություն): 2018 թվականին ՈՒԵՖԱ-ն հրապարակեց ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման թարմացված կանոնակարգը: Կանոնակարգը տեղայնացվել է նաև ՀՖՖ արտոնագրման համակարգում և իմ կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ ՀՖՖ Ակումբների արտոնագրման նախագծի ղեկավարին և ՀՖՖ Արտոնագրման բաժնի աշխատակազմին, ինչպես միշտ, բազմակողմանի օժանդակություն տրամադրել արտոնագրման թեկնածու ակումբներին՝ համակարգի պահանջներին նրանց համապատասխանելիությունը հերթական անգամ ապահովելու համար:

ՀՖՖ-ն հավատարիմ է մնում իր վարած քաղաքականությանը և մեծ տեղ է տալիս իր աշխատակիցների մասնագիտական որակները բարձրացնելուն: ՀՖՖ Արտոնագրման բաժնի աշխատակիցները ժամանակ առ ժամանակ վերապատրաստման դասընթացներ են անցնում ՈՒԵՖԱ-ի մասնագետների կողմից: Նախորդ մրցաշրջաններում ՈՒԵՖԱ-ի մասնագետներն այցելել են Հայաստան և տեղում ստուգումների ու սեմինարների միջոցով կրկին վերահաստատել են ՀՖՖ Արտոնագրման բաժնի աշխատակիցների բարձր կարգն ու աշխատանքի արդյունավետությունը: Այդ նույն մասնագետներն անցկացրել են սեմինարներ նաև ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների և նրանց աշխատակիցների համար: Ինչպես նախորդ մրցաշրջանների ընթացքում, գալիք մրցաշրջանում ևս նախատեսված են մի շարք վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ ինչպես Արտոնագրման բաժնի աշխատակիցների, այնպես էլ ակումբների արտոնագրման և ֆինանսական պատասխանատուների համար:

Միաժամանակ, ես ակնկալում եմ, որ բոլոր ակումբներն անխտիր նույնպես պատրաստակամություն և պատասխանատվություն կդրսևորեն արտոնագրման աշխատանքների նկատմամբ, ինչը թույլ կտա արտոնագրման գործընթացն ավարտել հաջողությամբ: Հայաստանի

ֆուտբոլի ֆեդերացիան ակումբների հետ համատեղ նոր փուլ է մտնում՝ պատրաստ իրականացնել բազմաթիվ նոր նախագծեր, որոնք շահեկան կլինեն Հայաստանում պրոֆեսիոնալ ֆուտբոլի զարգացման համար: Պատրաստ ենք ներդնել մեր ողջ կարողություններն ակումբներին աջակցելու, խնդիրները համատեղ լուծելու և զարգացման բարդ ճանապարհը միասին անցնելու համար Այդ առումով կարևորում ենք նաև ակումբների դերակատարությունը և ընդգծում՝ ակումբների արտոնագրման համակարգը և վերահսկողության գործընթացը նպաստում են ակումբների՝ ՈՒԵՖԱ-ի կողմից պահանջվող միջազգային ստանդարտներին համապատասխան գործունեություն ծավալելուն և պրոֆեսիոնալ աշխատանքի կատարմանը:

Ակումբների արտոնագրման համակարգում և ակումբների վերահսկողության գործընթացում ՀՖՖ որդեգրած քաղաքականությունն ու նպատակային խնդիրները համապատասխանում են ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման և ֆինանսական արդար խաղի համակարգի կողմից սահմանված Ակումբների արտոնագրման որակի ստանդարտի (2012 թվականի խմբագրություն) պահանջներին: Շարունակելով ձևավորված ավանդույթը և հիմնվելով նախորդ մրցաշրջանների արդյունքների վրա՝ ստորև ձեր ուշադրությանն են ներկայացվում ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի գործունեության հիմքերը, այն է՝ տարվող քաղաքականությունն ու նպատակային խնդիրները:

<u>ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</u>

- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի համար հստակ սահմանված ժամանակացույց և նպատակներ:
- Արտոնագրման թեկնածուների նրանց գործունեության հավասար վերաբերմունք և գնահատական Արտոնագրման համակարգում ներգրավված աշխատակիցների կողմից
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի նկատմամբ ակումբների կարիքների և ակնկալիքների բացահայտում, դրանց բավարարում, օժանդակություն ակումբների գործունեության բարելավման հարցերում և նրանց իրավունքների պաշտպանություն:
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի արդյունավետության մշտական և շարունակական բարելավում ու մասսայականացում:
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի աշխատակցի Վարքագծի Կանոնագրքի դրույթների անշեղորեն պահպանում:

- ՀՖՖ արտոնագրման բաժնի աշխատակազմի շարունակական վերապատրաստում և բարելավում:
- ՀՀ օրենսդրության, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնադրությունների, կանոնակարգերի և կանոնների անշեղորեն պահպանում ակումբների կողմից:
- ՀՀ օրենսդրության, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնների մշտական և ժամանակին հաղորդակցություն ակումբներին:
- Ակումբների արտոնագրման և վերահսկողության շրջանակներում եվրոպական առաջավոր փորձի ուսումնասիրում, կիրառում և միջազգային կապերի զարգացում:
- Ակումբների և ՀՖՖ-ի ենթակառուցվածքների զարգացում ըստ ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի սահմանած որակի չափանիշների ու պահանջների:
- Բազմակողմանի աջակցություն ակումբներին՝ մարզչական և այլ կադրերի պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև ենթակառուցվածքային ու իրավական հարցերում:
- Բազմակողմանի աջակցություն ակումբներին՝ ՈՒԵՖԱ-ի Ֆինանսական Արդար Խաղի դրույթների կիրառման հարցում:
- Ակումբների ֆինանսական գործունեության թափանցիկության բերալավում և ֆինանսական կայունության ապահովում:
- ՀՀ տարածքում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման հիմքերի ստեղծում, կրթական ծրագրերի մշակում, միջոցառումների կազմակերպում և մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման առկա պայմանների բարելավում:
- Բազմակողմանի աջակցություն ակումբներին պայմանավորված խաղերի և դրանց կազմակերպման դեմ պայքարի, ինպես նաև անօրինական խաղադրույքների դեմ պայքարի հարցում:
- Ակումբների՝ երկրպագուների հետ տարվող աշխատանքների համակարգում և զարգացում՝ ուղղված հայկական ֆուտբոլի մասսայականացմանն ու երկրպագուների հաճախելիության բարձրացմանը:
- Պատանի ֆուտբոլիստների և մարզիչների պաշտպանվածության և արդարության պահպանման վերահսկողություն:
- Խտրականության բացառում, իրավահավասարության և ռասիզմի դեմ պայքարի համընդհանուր սկզբունքների տարածում և պահպանում:
- Առողջական սահմանափակումներ ունեցող անձանց հետ տարվող մշտական աշխատանք:

<u>ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ</u>

- Արտոնագրերի շնորհում ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնության և ՈՒԵՖԱ-ի պաշտոնական ակումբային մրցաշարերին մասնակից թեկնածու ակումբներին:
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի զարգացման ուղիների մշակում:
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի կառավարում, գործունեության կոորդինացում, զարգացման ծրագրերի հստակեցում և դրանց իրագործման վերահսկում:
- Աջակցություն ՀՖՖ ակումբներին՝ նրանց մասնագետների (մարզիչներ, բժիշկներ, հաշվապահներ, մամուլի քարտուղարներ, անվտանգության և երկրպագուների հարցերով պատասխանատուներ և այլն) պատրաստման և վերապատրաստման հարցերում, այդ թվում՝ համապատասխան սեմինարների և դասընթացների կազմակերպում:
- Համապատասխան դասընթացների կազմակերպում և արտոնագրերի ու հավաստագրերի շնորհում ակումբների մարզիչներին և այն մասնագետներին, որոնց գործունեությունը պահանջում է համապատասխան թույլտվություն համաձայն ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի կանոնակարգերի:
- ՈՒԵՖԱ-ի չափանիշներին համապատասխան մարզչական Ներածական, Բ, Ա և ՊՐՈ դասընթացների կազմակերպում և անցկացում՝ ներառելով արտասահմանցի բարձրակարգ մասնագետների:
- Բազմակողմանի աջակցություն միջազգային մրցաշարերում հանդես եկող ՀՖՖ ակումբներին, այն է՝ ենթակառուցվածքային խնդիրներ, խաղերի կազմակերպում և կազմակերպչական ամբողջական օժանդակություն:
- Շփումների կազմակերպում, պահպանում և համագործակցություն այլ ասոցիացիաների, ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի հետ՝ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի զարգացման հարցերում:
- Մասնակցություն ՀՖՖ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և գործնական կիրառման հարցերում:
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի Կանոնակարգի, ՀՖՖ հրամանների և այլ արձանագրությունների, ինչպես նաև ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի նմանատիպ փաստաթղթերի պահանջների կատարման վերահսկում:
- ՀՖՖ ակումբների փաստաթղթերի և արխիվային նյութերի հաշվառման և վիճակագրության վարում, ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի գործունեության տարեկան հաշվետվությունների թողարկում:

- ՀՖՖ ակումբների հետ հաղորդակցության իրականացում էլեկտրոնային տարբերակով, ակումբներից ստացվող փաստաթղթերի ամբողջական պահպանում էլելկտրոնային տարբերակով:
- Ակումբների գործունեության համեմատական վերլուծության իրականացում և հերթական տպագիր հաշվետվության ներկայացում:
- Համեմատական վերլուծության շրջանակներում ակումբների աշխատանքի կազմակերպման հարցում թերությունների ու խնդիրների հայտնաբերում և դրանց շտկման ու լուծման ուղիների մշակում:
- Մշտական համակարգված աշխատանք ԶԼՄ-ների հետ և սոցիալական ցանցերում՝ ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի մասսայականացումն ապահովելու համար:
- Բազմակողմանի աջակցություն և խորհրդատվություն ՀՖՖ ակումբներին իրենց ենթակառուցվածքների կառուցման և վերանորոգման հարցերում՝ համապատասխան ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կողմից պահանջվող որակի ստանդարտների՝ այդ թվում պարբերաբար տեղում ստուգումներ մարզադաշտերում, ամենամյա բարելավումներ և պահանջվող ստանդարտների բարձրացում:
- ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի աշխատանքների կազմակերպման և իրականացման արդյունավետության շարունակական զարգացում ՈՒԵՖԱ-ի ակումբների արտոնագրման որակի ստանդարտի (2012թ. խմբագրություն) չափանիշների շրջանակներում:
- Առաջարկների ներկայացում մարզական օբյեկտների կառուցման և վերակառուցման, նյութատեխնիկական բազայի բարելավման վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մասնակցություն այդ նախագծերին՝ ինքնուրույն, ինչպես նաև պետական և տեղական մարմինների և մասնավոր ընկերությունների հետ համատեղ:
- ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի կողմից տրամադրվող տարբեր կանոնակարգերի թարգմանություն, տեղայնացում և տպագրում, այդ թվում՝ ՀՖՖ Մարզչական և ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգերի թարմացում, ՀՖՖ Անվտանգության և ապահովման կանոնակարգի և Կոմերցիոն կանոնակարգի ստեղծում:
- Տեղեկատվական, մեթոդաբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում ակումբներին՝ ֆինանսական, իրավական, կադրային, մարզական և այլ հարցերի վերաբերյալ:
- Օժանդակություն ՀՖՖ ակումբներին մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի մշակման, ռասիզմի դեմ պայքարի դրույթների ներառման հարցերում:

- Հստակ վերահսկում ակումբների մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի և դրանց իրականացման նկատմամբ:
- Մանկապատանեկան առաջնությունների կազմակերպման շրջանակների պարբերաբար զարգացում՝ հաշվի առնելով այդ ոլորտում առկա հրամայականները:
- Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծում և տրամադրում ակումբներին:
- Օժանդակություն ՀՖՖ ակումբներին պայմանավորված խաղերի և անօրինական խաղադրույքների դեմ պայքարի ուսուցողական ծրագրերի մշակման և միջոցառումների անցկացման հարցերում:
- Օժանդակություն ՀՖՖ ակումբներին ռասիզմի դեմ պայքարի և հակախտրականության ուսուցողական ծրագրերի մշակման և միջոցառումների անցկացման հարցերում:
- Դասընթացների, սեմինարների և հանդիպումների կազմակերպում ակումբների, նրանց ղեկավարության և աշխատակիցների հետ՝ հաշվի առնելով արդիական տենդենցների և խնդիրների առկայությունը, այդ թվում՝ համատեղ և համակարգված պայքարի և կանխարգելման կազմակերպում պայմանավորված խաղերի և ռասիզմի դեմ:
- Հանդիպումներ ակումբների արտոնագրման և ֆինանսական պատասխանատուների հետ համակարգի դեմ ծառացած խնդիրների քննարկման, դրանց լուծման, ինչպես նաև համակարգի հետագա շարունակական բարելավման նպատակով:
- Ակումբների երկրպագուների և ֆան ակումբների հետ տարվող աշխատանքի բարելավման և մասնագիտացման թեմայով դասընթացների կազմակերպում, երկրպագուների հետ տարվող աշխատանքների պատասխանատուների վերապատրաստում:
- Երկրպագուների հետ հարաբերությունների բարելավմանն ու ամրապնդմանն ուղղված հանդիպումներ և փորձի փոխանակում:
- Պատանի ֆուտբոլիստների ու մարզիչների պաշտպանվածության և արդարության պահպանման ծրագրի մշակում՝ որպես արտոնագրման գործընթացի կարևոր պայման:
- Պատանի ֆուտբոլիստների պաշտպանության պատասխանատու անձանց ներգրավում:

Այսպիսին կլինեն ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի և վերահսկողության գործընթացի նվազագույն խնդիրները գալիք մրցաշրջանի համար, որոնցից շատերը կրում են շարունակական բնույթ:

Հարկ է նշել, որ մարզադաշտերի անվտանգության, երկրպագուների ներգրավվածության և պատանեկան ֆուտբոլի զարգացման համար սահմանված արտոնագրման նվազագույն

չափանիշները անմիջականորեն ուղղված են ակումբային և հատկապես մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանը:

ՀՖՖ-ն որդեգրել է մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանն ուղղված ավելի արդի և պահանջկոտ քաղաքականություն: Այս քաղաքականության կարևոր կրողն է նաև Արտոնագրման համակարգը, որը այսուհետ թեկնածու ակումբներից պահանջելու է նախկինում սահմանված 5 մանկապատանեկան թիմի փոխարեն ունենալ առնվազն 7 մանկապատանեկան թիմ: Մենք համոզված ենք, որ սա կնպաստի մանկապատանեկան ֆուտբոլի մասսայականացմանը ավելի պրոֆեսիոնալ մակարդակով:

Կասկածից վեր է, որ, ըստ նշված քաղաքականության կետերի և նպատակային խնդիրների, տարվող աշխատանքները կնպաստեն ոչ միայն ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի և ակումբների վերահսկողության գործընթացի զարգացմանը, այլև ակումբների ֆինանսական, կադրային, ենթակառուցվածքային, իրավական և մարզական բնագավառներում տարվող աշխատանքների բարելավմանը, ֆինանսական արդար խաղի դրույթների պահպանմանը ու եվրոպական նվազագույն պահանջներին համապատասխանելիությանը:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան համոզված է իր ծրագրերի և որդեգրած ուղու ճշմարտացիության մեջ: Լիահույս ենք՝ գալիք տարիների ընթացքում համատեղ աշխատանքի շնորհիվ ֆուտբոլը Հայաստանում վերելք է ապրելու, որի կարևորագույն գործիքներից մեկն էլ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացն է: Դա ապահովելու համար շարունակելու ենք լինել հետևողական ու խստապահանջ: Մենք գնահատում ենք բոլոր շահագրգիռ կողմերի պատրաստակամությունն ու աջակցությունն արտոնագրման ծավալուն գործընթացին և բաց եք նոր մտքերի և առաջարկների համար:

ՀՖՖ Նախագահ **Ա. Վանեցյան**